ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

< 4 > սեպտեմբերի 2015թ. N 157-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուրի Ա.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով, դպրոցի գույքի հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար, ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Օհանյան Տիգրան	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի նախագահ.
Օհանյան Սիրաս	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ.
Ղազարյան Նորիկ	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ.
Գրիգորյան Աֆտանդիլ	- հանձնող
Խաչատրյան Ֆենյա	- ընդունող:

2. Հանձնաժողովին՝ գույքի հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ